## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

**«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/39» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

- *Վայրը՝* *Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 224/2 սենյակ*
- *Օրը՝* *05.02.2018թ.*
- *Ժամը՝* *11:00*

## Բանակցությունների անցկացման մասին

**1.** Ընդունել ի գիտություն, որ միաժամանակյա բանակցություններին հրավիրված մասնակիցներից ոչ մեկ չի ներկայացել:

***Ընդունել որոշում՝ կողմ- 5 դեմ-0***

**2.** Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը 2-6-րդ, 8-րդ, 13-րդ, 19-րդ, 29-32-րդ, 34-րդ, 37-րդ, 38-41-րդ, 50-րդ, 52-56-րդ, 61-րդ, 62-րդ, 64-րդ, 67-րդ, 68-րդ, 80-82-րդ, 89-91-րդ, 93-95-րդ, 100-րդ, 103-րդ, 106-րդ, 108-րդ և 109-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

***Ընդունել որոշում՝ կողմ- 5 դեմ-0***

**3.** Գնահատող հանձնաժողովը որոշեց armeps.am/epps համակարգով վերջացնել գնահատումը, որից գնահատման հաշվետվության (Evaluation) բեռնումից հետո միայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն մասնակիցների տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

***Ընդունել որոշում՝ կողմ- 5 դեմ-0***

*Մասնակցում էին՝*

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | *Հ.Մովսիսյան* | |
| *Հանձնաժողովի անդամներ՝* | *Վ.Մուրադյան* | |
| | *Վ.Մանուկյան* | |
| | *Ն.Ղուկասյան* | |
| | *Ս.Ղարագյոզյան* | |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | *Ա. Վարդանյան* | |